նութիւններ կը գտնէ հին աւանդութեանց հետ։

Սրբազան բանասէրը, յաջորդական հինգ զրուխներու մէջ, կենսագրելով Պռոշի յաջորդ եաչին (1299-1317), Էմիր-Հասան Բ. եւ իր եղբայրները, կը վերլուծէ ժե. դարու Արեւելեան Հայաստանի բաղաքական ու մտաւոր պայմանները եւ Պռոշեանց վերջին շառաւիղները ծանօթացնելով, իր պատմութիւնը կը հասցընէ մինչեւ Իսրայէլ Օրի Պռոշեանցը, պատմելով այս վերջնոյն ազգանուէր գործունէութիւնը։ Հատորին վերջաւորութեանը կայ Խաղբակեաններու տոհմագրութիւնը, ծիւղագրական առանձին ցուցակով։

Դարեգին Արքեպիսկոպոս իր այս բանասիրական հատորով մեծ ծառայութիւն կը մատուցանէ մեր ազգային պատմութեան, անոր կարեւորագոյն շրջաններէն մէկը դնելով նոր բնութեան լոյսին տակ։ Յուսալի է որ իր յաջորդական հատորները շուտով լոյս տեսնեն։ Անոնք ոչ միայն կարեւոր պիտի դառնան պատմութեան ներքին արժէքի տեսակէտով, այլ եւ ի յայտ պիտի բերեն, պայծառօրէն, Միջին Դարու հայ գեղարուեստը, իր բոլոր տեսակներով, սկսած հայ ճարտարապետութենէն մինչեւ ժողովրդային արուեստը։

Հատորը խմբագրուած է Հայաստանի կառավարութեան որոշեցրած նոր ուղղագրութեամբ եւ այդպէս տպագրուած պետական արտօնութեամբ։ Թուղթը ազնիւ է, տպագրութիւնը խնամուած, կողքը պարզ եւ գեղատիպ, սպիտակ փայլուն թուղթի վրայ։

Հալէպ ԱՐՏԱՒԱԶԴ Ղ.ԴԴ.

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՅ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

Եթէ վարդապետքն առաջինք ուսուցիչ քարուեստին իրրեւ տանջեցանն, ոչ կարացին ինքեանք իւրեանց աւգնել ինչ, աշակերտք նոցա տպէտք եւ վարձաւորք աւուրն(1) հացի, զի՞րդ կարծեսցես ո՛վ անմիտ թէ լիցին ապաստան ի բարկութեան։ Այսպիսի դառն մեղաւք կորնչի՞ն քաղաքք հպարքք։ Սիոնն մայր մարգարէից, ընդէ՞ր աւերեցաւ յաւիտենից։ Զմարգարէս սուտս սիրեաց, եւ կոտորեա՞ց զճշմարիտ մարգարէս։ Ամենեւին ի մեղս ծրփէր, ամենեւին ի չարի՞ս յածէր։ Ի հրապարակս սուտ մարգարէք, եւ ի սենեակս ներքինս քաւդեա՛յք։ Ի պատչամբս(2) գիւթս եւ մոլիս, եւ ի մառանս կախարդք եւ վհո՛ւկք։ Արարին ի նմա արատս եւ սպիս, ապականութիւն վէ՛րս եւ կեղտ։ Ցոտից մինչեւ ցգլուխս վառեալ էր չարաչա՛ր կեղտաւք։ Զի եռեսս տէր իւր զցաւս նորա, եկն բժշկե՛լ զկեղեքածս նորա։ Եղեն պատգամք իւր դեղ, բժշկեա՛ց զցաւսըն առանց կարեաց։ Ներց զզանձս իւր կարաւտութեան նորա, եւ զդիրս իւր ընանգութեա՛ն նորա։ Եկն կոյր եւ լուսաւորեցա՛ն աչք իւր։ Եկն բորոտ եւ սրբեցա՛ւ զոյն իւր։ Եկին մեղաւորք եւ արդարացա՛ն։ Մերձեցան պիղծք եւ սրբեցա՛ն։ Զպարտս զոր խորդ եւ մոխիր ոչ կարացին հատուցանել, եղեւ լալ եւ հաղորդեցան աղեսիցին(1) եւ(2) առի՛ն զփրկութիւն։ Սիրեաց Սիոնն զամենայն ինչ, բայց ի հաւատոյ եւ ի ճշմարտութենէ։ Քաղցր եւ շայեկան էր առողջութիւնն հարուածոցն եւ վիրացն նոցա։ Դա՞ռն էր ճշմարտութիւնն քաղցր, վիրաւորեալ լսելեաց նորա։ Վասն այնր եւ ճշմարիտն իրրեւ ետես եթէ խորշի ի հաւատոյ, խառնեաց զսէրն իւր քաղցրութեամբ, թաղեաց ուսո՛ւմն յառողջութեանն, կարկառոյր ընդ առողջութեանն, եւ զուսո՛ւմն ճշմարիտ։ Զի իրրեւ առնուին զառողջութիւն մարմնոյ, ապցեն ընդ նմա զուսումն հոգեւոր։ Ետես ի նմա երկուս իրս որ հակառա՛կ էին միմեանց։ Ետես թէ խորշի ի ճշմարտութենէ, եւ ծարաւի՛ է առողջութեան։ Խառնեաց ճշմարտութիւն ընդ առողջութեանն, զդաժան այն ընդ շայեկանին։ Զի իրրեւ կլցէ զշայեկանն, կլցէ ընդ նմա զդաժանն։ Ճաշակեաց

(1) Ն յաւելուած ուղղչին։

(2) Օրինակ գրէ՝ պաշտկամբս։

(1) Հաւանականութեամբ ընթեռնլի՝ աղերսեցին։

(2) եւ յաւելեալ ի վերայ բառին ի ձեռն ուղղչին։

digitised by A.R.A.R.@

Սիոնն զառողջութիւն, և քաղցրացա՛ւ հիւանդութեան նորա։ Ճաշակեաց զճշմարտութիւնն որ ի մէջ նորա, և զառնացա՛ն ամենեքեան նմա, նոցկացան ճաշակելիք իւր։ Ճաշակեաց եթուք և ընկէց զնա։ Ապականեալ էր հա՛մ բերանոյ նորա չարաչար ախտիւ դիւթութեանց։ Քաղքենեաց և նոցկացա՛ւ սիրտ իւր ի հաւատոյն և ի քարոզաց։ Ուր և պատահեաց նմա հաւատն, ՚ի՛ջ ընդ նմա ի պատերազմ։ Ուր և դիպեցաւ նմա ճշմարտութիւն, զգնացաւ զրահն ընդդէմ նորա։ Հալածական էր ի նմա հաւատ, և թշնամանեա՛լ ստուգութիւն։ Աւելի էր անդ սրբութիւն, և հալածեա՛լ պարկեշտութիւն։ Զոհք զոհէին ի հրապարակս, և նուէ՛ր ի վերայ տանեաց, Զի չէն լի՛ է վոհկաւք։ Մարգարէք ընդ անապատ սահէին։ Եկեղեցի միայն, և մոլիքն զո՛ւնդք գունդք։ Միքէ միայն, և խարեայքն ժողո՛վք։ Եթաց զբերան իւր խաւսել, ասէին նմա ապտա՛կ լիցիք։ Մի զարմանար զի ազատին, ած նմա ազա՛տ ապտակ։ Ասացից քեզ որ ինչ ծանր է քան զրան և քան գլսելիս։ Հող անարգ ստեղծչի իւրում ա՛ծ ապտակ յատենի։ Ո՞՛ արարիչ զթած, որ արար զձեռն որ եհար զնա։ Նըկարեաց զձեռն յորովայնի և արբ ի նմանէ գա՛ն յատենի։ Ո՛չ կարաց ստուգութիւն արգելուլ մինչ հաստէրն զնա։ Շնորհաւ (¹) իւրով արար զձեռն որ եհա՛ր զնա յատենի անդ։ Եւ այսոքիկ վասն ազատութեան, զի մի՛ վարեսցէ զնա բռնութեամբ։ Զայս ամենայն կատաղութիւն ստացաւ Սիոնն ի մոլորելոց։ Կատարեցան մարգարէքն ճշմարի՛տք։ Քարկոծեցան առաքեալք սուրբք։ Եւ կախեցաւ զփայտէ տէրն մարգարէից և առաքելոց։ Արիւնն սուրբ որ զոչեաց ի նմա, ցանեա՛ց զնոսա ընդ չորս կողմանս։ Ելեցաւ տնկեալն ի միջի, և հոսեցաւ ընդ չո՛ր հողմս։ Զի երկեցուսցէ(²) զչորս կողմս ի պարտեաց ցրուելոյն։ Այսր մնձի ապաշխարութեան, արմատ իւր ստուար սրբրութի՛ւն է։ Եւ նոյն ստութիւն սկսաւ ի մոլորութենէն Եգիպտոսի։ Զի Եգիպտոս աւգնականն նորա զկախարդա՛ց կախեցաւ բնաւին։ Ամոքն զոր առ անտի, յայսպիսի՛ կատաղութիւն ձգեաց զնա։ Երկիր անմիտ, դիւթութիւն և հմայք տիրեսցե՛ն քեզ։ Եթէ ստութիւն բնակէ ի քեզ, հեռանա՛յ ի քէն ճշմարտութիւն։ Ոչ ի վնասուէ փախչի նա, զի բա՛րձր է նա յամենայն վնասուց։ Ճշմարտութիւն իւր ոչ կարէ լինել խորհրդակից մոլորութեան։ Եթէ լոյս իբրև ինքն մեղանչէ, ոչ հաղորդի ընդ խաւարի, ուր զի պատերազմ է մեծ դիա՞՛րդ առնէ հաղորդութիւն։ Ելեցաց ճշմարտութիւն զքաղաքս, զի մի՛ բնակեսցէ ընդ կախարդս։ Կոտորեաց ստուգութիւն զմարգարէս, զի մի՛ եղիցի ընդ ճշմարիտս։ Այսպիսի պատերա՛զմ է ի միջի, և դու առ վոհ՞՛ւկս երթաս և հմայս։ Մի ուն՞ն (¹) քո առ ճշմարտութիւն, և միւդ առ ստութի՛ւն։ Եթէ ականջք զի երկու են և պաշտեն զբարբառս յերկուս կողմանս. սիրտ զի մի է զի՛՛՛